

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-241-Ն օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ՝

«6) մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով ՀՀ սահմանով տեղափոխվող, ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյին համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքները»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Անհրաժեշտությունը

ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելը պայմանավորված է փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության իրականացման ընթացքում ապրանքների ներմուծման և արտահանման գործընթացները պարզեցնելու անհրաժեշտությունից:

Նշված խնդիրը ներկայացվել է ՓՄՁ զարգացման խորհրդի 14.03.2016թ. նիստին, որի ժամանակ և հաստատվել է խնդրի լուծման անհրաժեշտությունը:

Միաժամանակ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանը ևս հանդես էր եկել նմանատիպ օրենսդրական առաջարկությամբ: Է. Մարուքյանի նախագծով առաջարկվում էր սահմանել, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 97-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների, տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի մաքսային ձևակերպումների իրականացման, միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մինչև մեկ տոննա քաշ ունեցող ապրանքների մաքսային հսկողության և մաքսային մարմինների կողմից յուրաքանչյուր փաստաթղթի տրամադրման համար նախատեսված մաքսավճարները չեն գանձվում, եթե արտահանվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 10 կիլոգրամը, խմբաքանակը չի գերազանցում 10 հատը և ընդհանուր արժեքը չի գերազանցում 150 000 դրամը: Առաջարկվում է սահմանել նաև, որ վերոնշյալ արտոնությունից տնտեսվարող սուբյեկտը կարող է օգտվել օրացուցային ամսվա կտրվածքով 2 անգամ: Պատգամավոր Է. Մարուքյանի ներկայացված նախագիծը քննարկվել է մշտապես գործող ֆինանսատնտեսագիտական նախարարական կոմիտեի 02.06.2016 թվականի նիստում և, հաշվի առնելով, որ նմանատիպ նախագիծ արդեն իսկ շրջանառվում էր ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, որոշվել է ներկայացնել համատեղ օրենսդրական նախաձեռնություն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Է. Մարուքյանի կողմից:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում ներմուծել արտադրողների ապրանքատեսակների կատալոգներ, ապրանքների նմուշներ՝ սպառողների հետ նախնական համաձայնություն ձեռք բերելու կամ արտադրության մեջ փորձարկելու նպատակով: Նշված տեղեկատուները ներմուծողներին տրամադրվում են անվճար, իսկ նմուշները ցածր արժեքով:

Համաձայն Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի մեկ առաքողի կողմից, մեկ հասցեով մեկ տրանսպորտային /փոխադրման/ փաստաթղթով ապրանքների, բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների, ներմուծման դեպքում մաքսատուրքեր, հարկեր չեն վճարվում, եթե այդ ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում 200 Եվրոյին համարժեք գումարը՝ հաշվարկված Միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության առաջացման պահի դրությամբ գործող փոխարժեքներով, որի մաքսային մարմնի կողմից իրականացվում է այդ ապրանքների բացթողումը:

Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ-ից արտահանվող ապրանքների համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանվում է 0 տոկոս:

Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ, 19)-րդ, 24)-րդ, 29)-րդ կետերից, 72-րդ հոդվածի 4-րդ մասից, ինչպես նաև 179-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ ապրանքների «ներմուծում», «արտահանում» մաքսային ռեժիմներով տեղափոխման ժամանակ անկախ ապրանքների արժեքից պետք է ներկայացվի հայտարարագիր, սակայն օրենքով կարող են սահմանվել մաքսավճարների չվճարման դեպքեր, իսկ Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքը հստակ չի սահմանում հայտարարագիր չներկայացնելու հնարավորությունը: Այս դեպքում շփոթություն է առաջացնում Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 96-րդ հոդվածը, որը թեև չի սահմանում մաքսավճար վճարելու պարտականություն մաքսատուրք չվճարողների համար, սակայն նաև չի սահմանում հայտարարագիր չներկայացնելու իրավունքը, որն իր հերթին բերում է մաքսավճարի վճարման անհրաժեշտության: Ստացվում է, որ հայտարարագիր ներկայացնելը ենթադրում է մաքսավճարի վճարման պարտականություն:

Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 97-րդ հոդվածը սահմանում է մաքսավճարների չափերը, դրանք են՝

- մաքսային ձևակերպումների համար՝ 3500 դրամ,
- ապրանքների զննման և հաշվառման համար՝ մինչև մեկ տոննա քաշ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար՝ 1000 դրամ, որը գանձվում է յուրաքանչյուր ապրանքատեսակի համար,

- Մաքսային մարմնի կողմից տրամադրվող յուրաքանչյուր փաստաթղթի (ձևաթղթի) տրամադրման համար՝ 1000 դրամ մաքսավճար: Նշված փաստաթղթերի ցանկը հաստատված է վերադաս մաքսային մարմնի 30.11.2010թ. թիվ 02/1490 հրամանով:

- Մաքսային մարմինների կողմից ժամանակավոր պահպանության համար՝ օրական 1000 դրամ:

Միաժամանակ տնտեսվարողները ստիպված են վճարել մաքսային ներկայացուցչի ծառայությունների համար՝ նվազագույնը 10000-15000 դրամ:

Հետևաբար տնտեսվարողները անվճար կամ ցածր արժեք ունեցող ապրանքները ներմուծելիս ստիպված են վճարել ավել գումարներ, քան արժեն ներմուծվող ապրանքները: Այսպես, եթե տնտեսվարողը ներմուծում է մեկ անուն ապրանք, ապա վճարում է նվազագույնը 6500 դրամ մաքսավճար և 10000-15000 մաքսային ներկայացուցչի վճարը: Գործնականում կարող է հասնել մինչև 40 անուն ապրանքի, որոնք իրենցից ներկայացնում են արտադրության մեջ օգտագործվող միկրո մասնիկներ:

Արտահանման դեպքում առկա է նույն խնդիրը, այսպես, եթե արտահանվում է ցածր արժողությամբ ապրանք, ապա տնտեսվարողը կարող է վճարել նշված ապրանքի արժեքի կրկնակի չափով մաքսավճար:

Օրինակ՝ հայկական մշակույթը ներկայացնող գրականության մեկ գրքի արժեքը տատանվում է 3000-5000 ՀՀ դրամ: Գրքերը 1 կամ 2 օրինակով, տարբեր ժամանակահատվածներում մատակարարելիս տնտեսվարողը ստիպված է վճարել նվազագույնը 6500 դրամ մաքսավճար, և մաքսային ներկայացուցչի վճար, որը տատանվում է 10000-15000 դրամի սահմաններում:

2. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

ՀՀ կառավարության կողմից ներկայումս իրականացվող մաքսային քաղաքականությունն ուղղված է ՀՀ-ում սահմանային անվտանգության ապահովմանը, գործարար միջավայրի բարելավմանը և ներդրումների խրախուսմանը, մաքսային ընթացակարգերի հստակեցմանը և պարզեցմանը:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծով առաջարկվող փոփոխություններն ուղղված են մաքսային ձևակերպումների գործընթացի պարզեցմանը և դյուրինացմանը և դրա համար պահանջվող ժամանակի և ծախսերի կրճատմանը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՎՋԵԲ-ի գործարարության աջակցման գրասենյակի կողմից:

5. Ակնկալվող արդյունքը

Պարզեցնել ցածր արժողություն ունեցող ապրանքների մաքսային սահմանով տեղափոխման գործընթացը, նշված դեպքում ազատել տնտեսվարողներին մաքսավճարների վճարման պարտականությունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	1	2	3	4
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	<p>Նախագծով առաջարկվում է «ՀՀ մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով մաքսավճարի արտոնություններ սահմանել նաև Միության մաքսային օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ ապրանքների ներմուծման դեպքերում մաքսատուրքի և հարկերի վճարման պարտավորություն չկրող, ինչպես նաև ՀՀ-ից մինչև 100 հազար դրամ արժողությամբ ապրանքներ արտահանող անձանց նկատմամբ:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի համաձայն, մաքսավճարը օրենքով սահմանված կարգով և չափով վճարվող՝ պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է, որն ուղղվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական ու սոցիալական բազայի ապահովմանը՝ ներկայացված առաջարկության վերաբերյալ կարևորում ենք ՀՀ ԿԱ ՊԵԿ դիրքորոշումը:</p> <p>Միաժամանակ, հաշվի առնելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածի կառուցվածքը՝</p>	Ընդունվել է ի գիտություն	Խմբագրվել է հաշվի առնելով առաջարկությունը

		առաջարկում ենք օրենքի 89-րդ հոդվածում լրացվող 6-րդ և 7-րդ ենթակետերը վերախմբագրել՝ սահմանելով, որ մաքսավճարից ազատվում են մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով ՀՀ սահմանով տեղափոխվող, ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյին համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքները:		
2.	ՀՀ արդարադատության նախարարություն	1. Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերնագիրը, ինչպես նաև նախագծի 1-ին հոդվածում «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքին կատարված հղումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
3.	ՀՀ արդարադատության նախարարություն	2. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշմանը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հիշյալ որոշման հավելվածի 300-րդ կետի պահանջներին:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
4.	ՀՀ արդարադատության նախարարություն	3. Նախագծի 2-րդ հոդվածում «իրապարակման» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «օրվան» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթները:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
5.	ՀՀ արդարադատության նախարարություն	4. Նախագիծն անհրաժեշտ է համաձայնեցնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության հետ:	Ընդունվել է ի գիտություն	

6.	<p>« ԿԱ պետական եկամուտների կոմիտե</p>	<p>1. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Օրենքի նախագիծ) նախատեսվում է մաքսավճարի վճարման արտոնություն տրամադրել մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով ՀՀ սահմանով տեղափոխվող այն ապրանքների համար, որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում 200 եվրոյին համարժեք գումարը, միևնույն ժամանակ նախատեսվում է տնտեսվարող սուբյեկտներին թույլատրել վերոնշյալ արտոնությունից օգտվել օրացուցային ամսվա կտրվածքով 2 անգամ: Նշվածի վերաբերյալ հայտնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսավճարը վճարվում է Միության մաքսային օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված՝ մաքսային մարմինների կողմից մաքսային ձևակերպումների իրականացմանն ուղղված գործողությունների, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից ապրանքների ժամանակավոր պահպանության, մաքսային ուղեկցման և նախնական որոշումների տրամադրման համար: Այսինքն, մաքսավճարը, ըստ էության, մաքսային մարմնի կողմից արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին մատուցվող ծառայությունների դիմաց կատարվող վճար է: Այս առումով, մաքսավճարն իր բովանդակությամբ ու տնտեսագիտական էությամբ տարբերվում է հարկից կամ այլ պարտադիր վճարից: Հետևաբար, մաքսավճարից ազատման արտոնության տրամադրումը քաղաքականության տեսանկյունից չի կարող դիտարկվել հարկերի կամ մաքսային այլ վճարների գծով արտոնությունների տրամադրման միևնույն հարթության վրա: Բացի այդ, ապրանքների որոշ խմբերի կամ գործարքների որոշ տեսակների համար մաքսավճարի գծով արտոնության</p>	
----	--	---	--

		<p>սահմանումը հիմնավոր չէ նաև այն առումով, որ շատ հաճախ մաքսավճարի օբյեկտ համարվող՝ մաքսային մարմնի կողմից իրականացվող գործողությունները կամ մատուցվող ծառայությունները իրենցից ենթադրում են ստանդարտ ընթացակարգեր (օրինակ, որևէ փաստաթղթի ձևաթղթի տրամադրումը), որոնք արտահանվող ապրանքների ծավալից կամ արժեքից կախված՝ չեն փոփոխվում և որոնց իրականացման համար մաքսային մարմինը ծախսում է միևնույն ծավալի նյութական ու աշխատանքային ռեսուրսներ: Հետևաբար մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայության յուրաքանչյուր տեսակի համար ենթակա է վճարման համապատասխան մաքսավճար:</p> <p>Հայտնում ենք նաև, որ Օրենքի նախագծով առաջարկվող՝ օրացուցային ամսվա ընթացքում առավելագույնը երկու անգամ մաքսավճարից ազատման մոտեցման կիրառությունը վարչարարության առումով և հաշվառման տեսանկյունից ռեսուրսներ պահանջող խնդիր է: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Օրենքի նախագծի ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար:</p>		
7.	<p>ՀՀ կենտրոնական բանկ</p>	<p>««Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջարկություններ և դիտողություններ չունի:</p>		
8.	<p>ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման եվ բարեփոխումների նախարարություն</p>	<p>«Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չունենք:</p>		

9.	ՀՀ առողջապահության նախարարություն	Ուսումնասիրելով «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հայտնում եմ, որ դիտողություններ և առաջարկություններ չկան:		
----	---	---	--	--

